



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԻԱՎ/ՁԻԱՅ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2019

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետվությունը պատրաստվել է առողջապահության նախարարության
ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի
մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումների հիմնական արդյունքների վերաբերյալ

I. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Նպատակը՝ ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի նվազեցում, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակի պահպանում, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 90%-ի կողմից իրենց կարգավիճակի իմացության ապահովում:

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակի փոխանցման նվազեցում առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում,
2. ԹՆՕ-ներին փոխարինող բուժման տրամադրում,
3. ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում,
4. ՏՍՏ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում,
5. աշխատանքային միգրանտների, նրանց ընտանիքի անդամների, պոտենցիալ միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում՝ առողջապահական ծառայությունների համապարփակ փաթեթի տրամադրմամբ,
6. հյուրընկալող երկրների հետ համագործակցության զարգացում՝ միգրանտներին (օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներ) ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով խորհրդատվություն տրամադրելու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանուն հետազոտություն անցնելու, անհրաժեշտության դեպքում ՀՌՎ բուժման հասանելիության և դրա անընդհատության ապահովման համար,
7. ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների իրականացում՝ ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների շրջանում,
8. ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում,

9. երիտասարդների շրջանում իրազեկման և ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների իրականացում,
10. դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդում,
11. առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար սեմինար-վարժանքների անցկացում,
12. նախակոնտակտային կանխարգելման տրամադրում,
13. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցման նպատակով զանգվածային լրատվամիջոցներով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի լուսաբանում, բնակչության իրազեկության մակարդակի բարձրացում:

ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի (Գլոբալ հիմնադրամ) աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի հասարակական ոլորտի հիմնական ստացող «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության (ՄՕԿ) հայաստանյան մասնաճյուղի միջոցով «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրեր Երևանի, Երևանի հարակից մարզերի, Շիրակի և Լոռու մարզերի թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ) շրջանում: Ծրագրերում ընդգրկվել է 3921 ԹՆՕ: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 2446 խորհրդատվություն և հետազոտություն ծրագրերի շահառուների շրջանում, նրանց տրամադրվել են 639965 ներարկիչ և 108486 պահպանակ, 642315 ախտահանող խճուծ: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ԹՆՕ-ներից մեկի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն», «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր», «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» և «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ներում և ՀՀ արդարադատության նախարարության 9 քրեակատարողական հիմնարկներում իրականացվող փոխարինող բուժման (ՄՓԲ) ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 487: Վճարովի փոխարինող բուժում նույն ժամանակահատվածի դրությամբ ստանում էր 81 ԹՆՕ: Ընդհանուր առմամբ, տարեվերջի դրությամբ փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների թիվը կազմել է 568:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի հասարակական ոլորտի հիմնական ստացող «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի միջոցով «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում» ՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր Երևանի, Շիրակի և Լոռու մարզերի կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ)

շրջանում: Ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների թիվը կազմել է 2977: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 2318 խորհրդատվություն և հետազոտություն ծրագրերի շահառուների շրջանում, նրանց տրամադրվել է 535318 պահպանակ: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ԿՍԿ-ներից երկուսի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի հասարակական ոլորտի հիմնական ստացող «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի միջոցով «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրեր Երևանի, Շիրակի և Լոռու մարզերի տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում: Ծրագրերում ընդգրկված SUS-ների թիվը կազմել է 3352: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 1905 խորհրդատվություն և հետազոտություն ծրագրերի շահառուների շրջանում, նրանց տրամադրվել է կանխարգելման 205883 միջոց (պահպանակ և լուբրիկանտ): ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված SUS-ներից 14-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ: Նշված ՀԿ-ի կողմից իրականացվել է նաև ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագիր Երևանում տրանսգենդեր անձանց (ՏԳ) շրջանում: Ծրագրում ընդգրկված ՏԳ-ների թիվը կազմել է 47: Իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 21 խորհրդատվություն և հետազոտություն, տրամադրվել է կանխարգելման 2596 միջոց (պահպանակ և լուբրիկանտ): Էլթոն Ջոնի ՁԻԱՀ-ի հիմնադրամի աջակցությամբ «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից Արարատի, Արմավիրի, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Սյունիքի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերի առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումներ, որոնց շրջանակում անցկացվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ 345 SUS-ների, 110 ԹՆՕ-ների, 9 ԿՍԿ-ների շրջանում: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված SUS-ներից 2-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:

Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար անցկացվել են սեմինար-վարժանքներ, որոնց մասնակցել է 33 մարդ:

2018 թվականի ընթացքում Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում «ՄՊԻԴ-ինֆոսվյազ» հիմնադրամի աջակցությամբ գյուղական և քաղաքային 52 համայնքներում միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շրջանում իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումներ. տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, անցկացվել են

հետազոտություններ ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն (ՁԻԱՀ-ի ԿՀԿ)՝ անցնելու հետազոտություններ այլ սեռավարակների վերաբերյալ: Այցելուների շրջանում իրականացվել է նաև տուբերկուլոզի նկատմամբ կարգավիճակի գնահատում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից առաջարկված 5 հարցերով: Գնահատման արդյունքում տուբերկուլոզի կասկածով այցելուներն ուղղորդվել են գյուղական ամբուլատորիաների միջոցով հետագա հետազոտություններ անցնելու: Նշված ծառայությունները տրամադրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական կլինիկաների բազայի վրա: Ծրագրում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 7793 միգրանտ, միգրանտի զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 4943 մարդ:

2018 թվականին Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ 64 գյուղական և քաղաքային համայնքներում միգրանտների զուգընկերների շրջանում իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումներ. տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, անցկացվել են հետազոտություններ ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ անցնելու հետազոտություններ այլ սեռավարակների վերաբերյալ: Այցելուների շրջանում իրականացվել է նաև տուբերկուլոզի նկատմամբ կարգավիճակի գնահատում ԱՀԿ-ի կողմից առաջարկված 5 հարցերով: Գնահատման արդյունքում տուբերկուլոզի կասկածով այցելուներն ուղղորդվել են գյուղական ամբուլատորիաների միջոցով հետագա հետազոտություններ անցնելու: Նշված ծառայությունները տրամադրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բժշկական խմբերի կողմից գյուղական ամբուլատորիաներում և ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական կլինիկաների բազայի վրա: Ծրագրում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 11647 միգրանտ, նրանց զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 4773 մարդ:

Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ 2018 թվականին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից գյուղական 10 համայնքներում միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում իրականացվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումներ, որոնց շրջանակում տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, անցկացվել են հետազոտություններ ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում այցելուներն ուղեգրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ անցնելու հետազոտություններ այլ սեռավարակների վերաբերյալ: Այցելուների շրջանում իրականացվել է նաև տուբերկուլոզի նկատմամբ կարգավիճակի գնահատում ԱՀԿ-ի կողմից առաջարկված 5 հարցերով: Գնահատման արդյունքում տուբերկուլոզի

կասկածով այցելուներն ուղղորդվել են գյուղական ամբուլատորիաների միջոցով հետագա հետազոտություններ անցնելու: Նշված ծառայությունները տրամադրվել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական բժշկական խմբերի կողմից գյուղական ամբուլատորիաներում: Ծրագրում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 1362 միգրանտ, նրանց զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 892 մարդ: Կազմակերպության աջակցությամբ մշակվել, տպագրվել և շահառուների շրջանում տարածվել են տեղեկատվական-կրթական նյութեր:

Ռուսաստանի Դաշնության և Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ իրականացված ծրագրերի շրջանակում միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում անցկացված կանխարգելիչ միջոցառումներում 120 գյուղական և քաղաքային համայնքներում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 20802 միգրանտ, նրանց զուգընկեր և համայնքային բնակիչ: ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտվել է 10608 մարդ: Հետազոտվածներից 10-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունն աջակցել է միգրանտների շրջանում ծրագրերի իրականացմանը ՀՀ ամենամեծ թվով միգրանտներ ունեցող տարածաշրջանների առանձնացման, թիրախային խմբերի համար տեղեկատվական նյութերի մշակմանը մասնակցության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների հետ համագործակցության ապահովման միջոցով:

2018 թվականին ԱՊՀ միջխորհրդարանական ասամբլեայի աշխատանքային խմբի կողմից պատրաստվել է ԱՊՀ անդամ պետություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և միգրացիայի ոլորտում օրենսդրության վերլուծություն, որի պատրաստման նախագիծը ուղարկվել էր անդամ պետություններին դիտողությունների և առաջարկությունների համար: ՀՀ առողջապահության նախարարությունը ներկայացրել էր առաջարկություններ: ՀՀ առողջապահության նախարարության դիրքորոշումը կապված օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով խորհրդատվություն տրամադրելու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանուն հետազոտություն անցնելու, անհրաժեշտության դեպքում ՀՌՎ բուժման հասանելիության և դրա անընդհատության ապահովման վերաբերյալ ներկայացվել է նաև Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերին նվիրված վեցերորդ համաժողովի շրջանակում (18-20 ապրիլի 2018 թ., ք.Մոսկվա, ՌԴ) կայացած ԱՊՀ անդամ պետություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և միգրացիայի ոլորտում օրենսդրության վերլուծության պատրաստման

ԱՊՀ միջխորհրդարանական ասամբլեայի աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայությունը ՀՀ-ում ապաստան հայցած օտարերկրյա քաղաքացիների համար «Հատուկ կացարանում» ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել և անցկացրել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ տեղեկատվական հանդիպում՝ ուղղված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Հանդիպման ընթացքում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետները տրամադրել են տեղեկատվություն ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների, կանխարգելման միջոցների, ՀՌՎ բուժման նշանակության և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կարևորության մասին, խրախուսելով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելը:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմը 2018 թվականին ՀՀ արդարադատության նախարարության 9 քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) Գլրբալ հիմնադրամի աջակցությամբ շարունակել է իրականացվել ՄՓԲ ծրագիրը: ՄՓԲ ծրագրում 2018 թվականին ընդգրկվել է 50 նոր շահառու: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՄՓԲ ստանում էր 167 կալանավորված անձ և դատապարտյալ: 2018 թվականի ընթացքում ՄՓԲ ծրագրի ղեկավարի և համակարգողի կողմից իրականացվել է 49 մոնիտորինգային այց ՄՓԲ տրամադրող ՔԿՀ-ներ: Կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում 2018 թվականի ընթացքում անցկացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ 2669 խորհրդատվություն: 2018 թվականին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմը ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի հետ ՔԿՀ-ներում համատեղ իրականացրել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ: Ընդհանուր առմամբ հետազոտվել է 2500 կալանավորված անձ և դատապարտյալ, արդյունքում հայտնաբերվել է ՄԻԱՎ վարակի 6 նոր դեպք: ՔԿՀ-ներում գտնվող ՄԻԱՎ վարակով 21 կալանավորված անձ և դատապարտյալ ստանում էր հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի № 193-Ա/1 հրամանի համաձայն «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում» ծրագրի շրջանակում 2018 թվականի դեկտեմբերի 24-25-ը Հայաստանի Հանրապետության 2018 թվականի երիտասարդական մայրաքաղաք Տավուշի մարզի Իջևան քաղաքում նախատեսվել է իրականացնել սեմինար-դասընթաց «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում» թեմայով՝ Իջևանի 45 երիտասարդների մասնակցությամբ: Ծրագրի նպատակն էր նպաստել երիտասարդների, այդ թվում՝ նաև հաշմանդամ երիտասարդների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի,

ներարկային թմրամիջոցների, ակոհոլի, ծխախոտի օգտագործման վտանգավորության և դրանց հակազդման մեխանիզմների վերաբերյալ, նպաստել ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ խտրականության վերացմանը: Ծրագրի իրականացման նպատակով «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է գնման գործընթաց, սակայն գնման ընթացակարգերը չեն կայացել: Այլևս չունենալով գնման գործընթացի կազմակերպման նպատակով անհրաժեշտ ժամկետներ՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ակոհոլի և ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում» ծրագիրն ու ծախսերի նախահաշիվը հաստատելու և գումար հատկացնելու մասին» № 193-Ա/1 հրամանը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի № 213-Ա/1 հրամանով:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի յուրօրյան էջում պարբերաբար տեղադրվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմաներով սոցիալական գովազդներ, հանրային տարբեր միջոցառումների մասին պատմող տեսանյութեր, ֆեյսբուքյան, թվիթերի, օդնոկլասնիկի սոցիալական ցանցերի էջերում՝ ոլորտին վերաբերող նորություններ, տեսանյութեր, սոցիալական գովազդներ, հանրային միջոցառումների մասին իրազեկումներ:

Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՀՀ 7 մարզերի 25 համայնքներում դեռահասների շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու նպատակով ստեղծված համայնքային ռեսուրսային կենտրոններ այցելած դեռահասների համար անցկացվել են սեմինար-քննարկումներ և վեբինարներ, որոնց ընթացքում դեռահասները տեղեկացվել են ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների, ՄԻԱՎ վարակի կանխարգելման մոտեցումների, անվտանգ վարքագծի, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և հիվանդության վաղ ախտորոշման կարևորության մասին: Ընդհանուր առմամբ ռեսուրսային կենտրոններ այցելել է 1011 դեռահաս:

ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգում 2018 թվականին, համաձայն հանրակրթության պետական չափորոշչի, շարունակվել է 2008-2009 ուսումնական տարվանից հանրապետության հիմնական դպրոցների 8-9-րդ դասարաններում, իսկ 2010-2011 ուսումնական տարվանից 10-11-րդ դասարաններում ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված ծրագրերի և ուսումնական նյութերի հիման վրա «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդումը: ՀՀ կրթության և գիտության նախարարի 12.06.2018թ. N 587-Ա/2 հրամանով «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի ներկայացրած, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկվայի տարածաշրջանային գրասենյակի պատրաստած «Առողջ ապրելակերպ» դասընթացի թեմատիկ տեսահոլովակները և տեսահոլովակների օգտագործման մեթոդական ուղեցույցը երաշխավորվել են

գործածության՝ որպես ուսումնաօժանդակ նյութ՝ «Առողջ ապրելակերպ» դասընթացի համար: Առողջ ապրելակերպին վերաբերող նյութեր ուսուցանվում են նաև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական և, որոշակի ծավալով, բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի նվազեցման նպատակով ՀՀ-ում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով նախատեսված է նախակոնտակտային կանխարգելման տրամադրում: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում 2018 թվականին նախակոնտակտային կանխարգելում է տրամադրվել 8 մարդու:

ՁԻԱՀ-ին առնչվող հիշարժան օրերի՝ ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրվա և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակում կազմակերպվել և անցկացվել են մի շարք միջոցառումներ, որոնք լայնորեն լուսաբանվել են ՋԼՄ-ներով: Լրատվամիջոցները պարբերաբար տեղեկատվություն են տրամադրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խնդիրների վերաբերյալ: Պատրաստվել և ցուցադրվել են հեռուստա- և ռադիոհաղորդումներ, սոցիալական գովազդներ, էլեկտրոնային կայքերում տեղադրվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնախնդիրներին առնչվող հոդվածներ:

Ռուսաստանի Դաշնության օգնության ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի շրջանակում հանրապետության 6 մարզերում ՀԿ-ների հիմքի վրա ստեղծվել և գործում են կանանց փոխօգնության խմբեր, որոնց գործունեությունն ուղղված է ՄԻԱՎ-ի նկատմամբ կանանց խոցելիության նվազեցմանը: 2018 թվականի ընթացքում կազմակերպվել է համայնքային կանանց 62 հանդիպում, որոնց մասնակցել է 1025 մարդ:

«Իրական աշխարհ, Իրական մարդիկ», «Ներուժ զարթոնքի» և «Փինք» ՀԿ-ները Գլոբալ հիմնադրամի և «Ռոբերտ Կար» հիմնադրամի ֆինանսավորմամբ համատեղ իրականացրել են ծրագրեր, որոնց նպատակն էր նպաստել ՄԻԱՎ վարակին առնչվող որակյալ ծառայությունների և շարունակական հասանելիության ապահովմանը ՄԻԱՎ-ով ապրող և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի համար: Ծրագրի շրջանակում իրականացվել է ՄԻԱՎ-ով ապրող և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրականության դրսևորումների ուսումնասիրություն, նկարահանվել է այդ ուղղությամբ իրականացված սոցիալական էքսպերիմենտի վերաբերյալ տեսանյութ: Կազմակերպվել է «ՄԻԱՎ-որեք ջանքերը» ազգային կոնֆերանսը, որի նպատակն էր ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի խնդիրների վերհանումը, դրանց լուծման ուղիների որոնումը: Կոնֆերանսին մասնակցել են պետական, հասարակական և միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչներ: Իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտին առնչվող ուսումնասիրություններ, որոնց արդյունքների վերաբերյալ զեկույցները ներկայացվել են վերոնշյալ կոնֆերանսի ժամանակ:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ԲՀԿ) կողմից իրականացվել է ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի Շիրակի մարզի գյուղական համայնքների բնակչության շրջանում: Ծրագրի շրջանակում համայնքային համակարգողների, տարբեր մասնագետների, եկեղեցու սպասավորների համար անցկացվել է ՄԻԱՎ վարակի հիմնահարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված սեմինար-վարժանք, որին մասնակցել է 32 մարդ: Անցկացվել են նաև համայնքային հանդիպումներ, որոնց մասնակցել է 160 մարդ: Ծրագրի շրջանակում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն է անցել 33 մարդ: Անցկացվել են իրազեկման դասընթացներ «Հավասարը՝ հավասարին» ուսուցման մեթոդով, որոնցում ընդգրկվել է 446 մարդ:

ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ 2017 թվականին անցկացված հազուստ մոդելավորողների «Fashion AIDS Line» մրցույթի հաղթողները ներկայացրել են իրենց հավաքածուները 2018 թվականի ապրիլի 18-20-ը Մոսկվայում կայացած Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերին նվիրված վեցերորդ համաժողովի շրջանակում կազմակերպված ցուցադրության ժամանակ:

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի հայաստանյան գրասենյակի, ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի, «Եղիր տեղեկացված» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել և անցկացվել է «Կարմիրը կտավին» խորագրով միջոցառումը, որի ժամանակ հայտնի նկարիչներն ու իլյուստրատորները իրենց յուրօրինակ մեկնաբանությամբ ներկայացրել են ՁԻԱՀ-ի դեմ պայքարի խորհրդանիշ համարվող Կարմիր երիզը: Միջոցառման ընթացքում նաև առաջին անգամ ներկայացվել է ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ խտրականության վերաբերյալ հայտնի աստղերի մասնակցությամբ նկարահանված տեսահոլովակը: Միջոցառմանը մասնակցել են առողջապահության նախարարը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտը համակարգող նախարարի տեղակալը: Օրվա կապակցությամբ ուղերձով մասնակիցներին է դիմել առողջապահության նախարարը:

Ռազմավարություն 2. ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում բժշկական կազմակերպություններում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան սկրինինգ: 2018թ. իրականացվել է դոնորական արյան նմուշների 16533 հետազոտություն:

Ռազմավարություն 3. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծառայությունների ընդլայնում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հետագա ընդլայնում,
2. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում, համաճարակաբանական հետազոտություն,
3. ռեֆերենսային մեթոդով ՄԻԱՎ-ի հայտնաբերում, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն, ՄԻԱՎ վարակի վերջնական ախտորոշում, համաճարակաբանական հետազոտություն,
4. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաներում որակի արտաքին և ներքին հսկողության իրականացում,
5. բժշկական կազմակերպություններին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, ՄԻԱՎ վարակի ախտորոշման, կանխարգելման գործնական հարցերով մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության տրամադրում,
6. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում ՀԿ-ների ուղղորդմամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրման ընդլայնում,
7. բնակչության շրջանում, ներառյալ առավել վտանգի ենթարկվող խմբերը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խթանման ու մասսայականացման նպատակով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններով ուղեկցվող հանրային միջոցառումների իրականացում,
8. մշակել արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ և սահմանված կարգով ներկայացնել հաստատման ՀՀ կառավարություն:

2018 թվականին բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցել է 80494 մարդ (չհաշված հղիները): ԶԻԱՀ-ի ԿԿԿ-ում նշված ժամանակաշրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ

խորհրդատվություն և հետազոտություն է անցել 5864 մարդ: Հաշվետու տարում ՀՀ քաղաքացիների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 429 դեպք:

«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակում շարժական բժշկական խմբի կողմից Արմավիրի մարզի 6 և Արարատի մարզի 3 գյուղական համայնքներում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրվել 379 անձի, որոնցից 241-ը անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն: Հետազոտված 3-ի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նրանք վերցվել են դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ: Ծրագրի իրականացման ընթացքում տրամադրվել են 1100 պահպանակ, 2500 տեղեկատվական-կրթական նյութ: Համայնքային կամավորների համար անցկացվել են 2-օրյա սեմինար-վարժանքներ, որոնց մասնակցել է 64 մարդ: Վերջիններս «հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցում են անցկացրել 1504 համայնքային բնակիչների շրջանում:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն, որի կազմում գործում է հանրապետությունում միակ ռեֆերենս լաբորատորիան, 2018 թվականի ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող 51 լաբորատորիաներում իրականացրել է որակի արտաքին հսկողություն: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետները ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաներին տրամադրել են մեթոդական օգնություն հետազոտությունների իրականացման, գործողությունների ստանդարտ ընթացակարգերի մշակման, նաև ներլաբորատոր որակի հսկողության իրականացման հարցերով: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի ՄԻԱՎ-ի հաստատման լաբորատորիան 2018 թվականին անցել է որակի արտաքին հսկողություն երկու տարբեր իրականացնողների միջոցով:

2018 թվականին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից իրականացվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների որակի արտաքին հսկողություն ՀՀ ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալի լաբորատորիայում: Նշված լաբորատորիայում տարվա ընթացքում իրականացվել է 61 հետազոտություն:

2018 թվականին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից իրականացվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների որակի արտաքին հսկողություն նաև ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության զինվորական հոսպիտալների լաբորատորիաներում:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության ծառայություններ տրամադրող 129 բժշկական կազմակերպություններին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետները տրամադրել են տեխնիկական աջակցություն, մեթոդական և գործնական օգնություն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, ՄԻԱՎ վարակի ախտորոշման, կանխարգելման հարցերով:

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և ՏՍՏ-ների շրջանում Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում 2018 թվականին շարունակվել է լնդային տրանսուդատի միջոցով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի աջակցությամբ 2018 թվականին շարունակել է իրականացնել «Հայաստանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման մատչելիության ապահովում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի նպատակներին հասնելու ճանապարհին» ծրագիրը: Ծրագրի շրջանակում ՀՀ բոլոր մարզերում ստեղծված երիտասարդների ռեֆերենտ խմբերը շարունակել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտման կարևորության և ինքնաթեստավորում անցնելու հնարավորության վերաբերյալ իրազեկման աշխատանքները, որոնցում ընդգրկվել է 1200 մարդ: Ծրագրի շրջանակում 2018թ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ ինքնաթեստավորվել է շուրջ 7800 մարդ: Նրանցից մեկի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ վարակ, նա վերցվել է դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ: Ինքնաթեստավորման 4550 թեստ նվիրատվությամբ հանձնվել է շահագրգիռ կազմակերպություններին հետազոտություններ իրականացնելու համար: Տեղական և միջազգային փորձագետների ներգրավմամբ իրականացվել է «ՀՀ-ում առողջապահական ծրագրերի ֆինանսավորման նորարարական/այլընտրանքային մեթոդները և մեխանիզմները» թեմայով հետազոտություն, որի արդյունքների վերաբերյալ կազմվել և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի հայաստանյան գրասենյակ է ներկայացվել հաշվետվություն: Ինքնաթեստավորում անցած 2000 մարդկանց շրջանում իրականացվել է ՄԻԱՎ-ի նկատմամբ ինքնաթեստավորման հարցերի վերաբերյալ հետազոտություն:

2018 թվականին ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ն «Դրական մարդկանց հայկական ցանց» սոցիալական հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացրել է բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խթանմանն ու մասսայականացմանն ուղղված՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններով ուղեկցվող հանրային միջոցառումներ Երևան, Վանաձոր, Գյումրի, Արմավիր, Արարատ, Մասիս, Աբովյան, Գավառ քաղաքներում և Ախուրյան համայնքում: Ընդհանուր առմամբ անցկացված 20 միջոցառումների ընթացքում ՄԻԱՎ-ի, հեպատիտներ Բ-ի, Ց-ի վերաբերյալ հետազոտություններ անցել է 2481 մարդ: Միջոցառումների իրականացմանն աջակցել են ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիրը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը և «Գիլիար» ընկերությունը: ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի միջազգային օրվա և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակում կազմակերպված հանրային միջոցառումներին մասնակցել է առողջապահության

նախարարը, որը ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի շարժական կլինիկայում հետազոտվել է ՄԻԱՎ-ի, հեպատիտների վերաբերյալ՝ իր օրինակով խրախուսելով հետազոտություն անցնելը:

Առողջապահության նախարարության կողմից մշակվել են արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ, որոնք սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարություն և հաստատվել:

Ռազմավարություն 4. Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. բոլոր հղի կանանց ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում,
2. ՄԻԱՎ վարակ ունեցող հղիներին և նրանցից ծնված նորածիններին ՀՌՎ կանխարգելիչ բուժման տրամադրում,
3. հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն իրականացնող բժշկական կազմակերպություններին անհրաժեշտ քանակի թեստ-հավաքածուներով ապահովում,
4. ըստ անհրաժեշտության՝ նորածիններին արհեստական կաթնախառնուրդներով ապահովում,
5. հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ երկրորդ հետազոտության իրականացում:

2018 թվականին հետազոտվել է հղիների ավելի քան 95%-ը: Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում է ստացել ՄԻԱՎ վարակ ունեցող 46 հղի կին, նրանցից ծնված 47 նորածնի տրամադրվել են հակառետրովիրուսային օշարակներ: Նորածիններն ապահովվել են արհեստական կաթնախառնուրդներով: Հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն իրականացնող բժշկական կազմակերպություններն ապահովվել են անհրաժեշտ քանակի թեստ-հավաքածուներով:

2016թ. հունիսին Նյու-Յորքում կայացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին նվիրված բարձր մակարդակի հանդիպման շրջանակում ԱՀԿ-ի կողմից Հայաստանին էր հանձնվել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը փաստող հավաստագիր: 2018 թվականին ԱՀԿ-ն պաշտոնապես վերահաստատել է 2016-17թթ. համար մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը հաստատող ցուցանիշների պահպանումը և Հայաստանի՝ որպես մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակը:

II. ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝ բուժման հասանելիության ընդլայնում և ՄԻԱՎ վարակով պայմանավորված մահացության նվազեցում:

Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակով պացիենտներին ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողության իրականացում,
2. ՄԻԱՎ վարակով պացիենտների զուգընկերների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության անցկացում,
3. ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողության համակարգի բարելավում,
4. Հետկոնտակտային կանխարգելման տրամադրում ՄԻԱՎ-ով մասնագիտական և ոչ մասնագիտական վարակման վտանգի ենթարկվածներին, ներառյալ դիսկորդանտ զույգերին,
5. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման, ՄԻԱՎ վարակով պացիենտների բուժման և վարման, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) ուղեցույցների պարբերաբար վերանայում ԱՀԿ-ի ուղեցույցներին դրանք համահունչ դարձնելու նպատակով,
6. ՀՌՎ բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտներին, բուժման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգի իրականացում,
7. Բժշկական կազմակերպություններին ՄԻԱՎ վարակով պացիենտների վարման գործնական հարցերով մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության տրամադրում,
8. օպորտունիստական վարակների ախտորոշման, բուժման և կանխարգելման տրամադրում,
9. ՄԻԱՎ վարակով պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրում,
10. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժման տրամադրում,
11. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով (ներառյալ ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ խարանձու խտրականությունը) բուժաշխատողների շարունակական ուսուցում և կատարելագործում:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դիսպանսերային հսկողության մեջ էր գտնվում ՄԻԱՎ վարակով 2015 պացիենտ: 2018 թվականի ընթացքում դիսպանսերային հսկողության է վերցվել ՄԻԱՎ վարակով 401 նոր պացիենտ:

Բարելավվել է ՄԻԱՎ վարակի նկատմամբ համաճարակաբանական հսկողությունը, զուգընկերների հայտնաբերումն ու հետազոտումը: 2018 թվականի ընթացքում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտվել է ՄԻԱՎ վարակով պացիենտների զուգընկերների 78%-ը: Դիսկորդանտ զույգերին տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման, ընտանիքի պլանավորման հարցերով:

ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացած նոր պացիենտներից դիսպանսերային հսկողության վերցվել է 93,5%-ը: 2018 թվականին դիսպանսերիզացիա անցել է ՄԻԱՎ վարակ ախտորոշմամբ պացիենտների 84,1%-ը:

2018 թվականին հետկոնտակտային կանխարգելում տրամադրվել է ՄԻԱՎ-ով մասնագիտական և ոչ մասնագիտական վարակման վտանգի ենթարկված (ներառյալ դիսկորդանտ զույգերը) 28 մարդու:

Ի կատարումն ՀՀ-ում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի՝ ԱԿԿ-ի և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի առաջարկությունների հիման վրա վերանայվել, լրամշակվել և առողջապահության նախարարի հրամանով հաստատվել է «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղեցույցը»:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՄԻԱՎ վարակով 1871 պացիենտ (1165 տղամարդ, 677 կին և 29 երեխա) ստանում էր ՀՌՎ բուժում: Առաջին շարքի սխեմաներով ՀՌՎ բուժում էր ստանում ՄԻԱՎ վարակով 1690 պացիենտ, իսկ երկրորդ շարքի սխեմաներով՝ 181 պացիենտ: ՀՌՎ բուժում ստացողների շրջանում իրականացվել է բուժման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգ:

Տարվա ընթացքում բժշկական կազմակերպություններին ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ի մասնագետների կողմից տրամադրվել է մեթոդական և գործնական օգնություն, տեխնիկական աջակցություն ՄԻԱՎ վարակով պացիենտների վարման հարցերով:

2018 թվականի ընթացքում ՄԻԱՎ վարակով 335 պացիենտի տրամադրվել է օպորտունիստական հիվանդությունների ամբուլատոր բուժում, 284-ին՝ օպորտունիստական հիվանդությունների կանխարգելում:

Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2018թ. ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ի տարածքում կառուցվել և գործարկվել է 92,7 կվտ հզորությամբ արևային ֆոտոէլեկտրական կայան, որը, ըստ էության գործնականում կարող է ծածկել ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ի էլեկտրաէներգիայի կարիքները: Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում նաև 2018թ. հիմնանորոգվել և արդիական սարքավորումներով

հագեցվել են լաբորատոր և բժշկական օգնության և սպասարկման բաժինների նոր ենթակառուցվածքները:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Դրական մարդկանց հայկական ցանց» սոցիալական ՀԿ-ի կողմից իրականացվել է ՄԻԱՎ վարակով պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրման ծրագիր: Ծրագրի շրջանակում ՄԻԱՎ վարակով պացիենտներին տրամադրվել են «Հավասարը՝ հավասարին» խորհրդատվություն, իրավական հարցերով խորհրդատվություն, սոցիալական և հոգեբանական աջակցություն: Ընդհանուր առմամբ ծրագրի շահառուների թիվը կազմել է 2095:

2018 թվականի ընթացքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժում տրամադրվել է 63 պացիենտի:

2018 թվականի ընթացքում շարունակվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման և կատարելագործման նպատակով ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում ներդրված «ՄԻԱՎ վարակ» դասընթացի առցանց տարբերակի բարեփոխման աշխատանքները: Ներկայումս այն տեղադրված է առողջապահության ազգային ինստիտուտի կայքում:

ՀՀ ոստիկանության բժշկական վարչության հիգիենիկ-հակահամաճարակային հսկողության կենտրոնի կողմից ոստիկանության ենթակայության ստորաբաժանումներում կազմակերպվել են ՄԻԱՎ վարակի հիմնահարցերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ, տրամադրվել են տեղեկատվական-կրթական նյութեր, անցկացվել են սեմինարներ ՀՀ ոստիկանության աշխատակիցների համար: ՀՀ ոստիկանության բժշկական վարչության ծառայողական պարապմունքների ժամանակ անցկացվել է դասընթաց ՄԻԱՎ վարակի համաճարակաբանության, փոխանցման ուղիների և կանխարգելման հարցերով:

III. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նպատակը՝ ռազմավարական նշանակության համապատասխան տեղեկությունների հավաքագրում՝ իրավիճակին համարժեք գործողություններ պլանավորելու և իրականացնելու համար:

Ռազմավարություն 1. Համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) արդյունավետ համակարգի գործունեության ապահովում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով սահմանված միջոցառումների մոնիտորինգ և գնահատում,
2. ՄԻԱՎ//ՁԻԱՀ-ի վերաբերյալ տվյալների համապարփակ էլեկտրոնային բազայի ստեղծում և վարում,
3. ՄԻԱՎ վարակի նկատմամբ ընթացիկ, կենսաբանական և վարքագծային համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) իրականացում,
4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների բուժման երկարատև մոնիտորինգի համակարգի գործունեության ապահովում դեղակայունության զարգացումը գնահատելու և կանխելու նպատակով,
5. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող գործնական հետազոտությունների իրականացում,
6. դրամաշնորհային ծրագրային առաջարկների մշակում և ներկայացում Գլոբալ հիմնադրամին և այլ դոնորների/կազմակերպությունների,
7. դրամաշնորհային ծրագրերից պետական ֆինանսավորման աստիճանական անցման պատրաստվածության (կայունության) պլանի մշակում:

ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խումբն իրականացրել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումների մոնիտորինգի և գնահատման աշխատանքներ: Խմբի կողմից հավաքագրվել են տվյալներ պետական, ոչ պետական, միջազգային կազմակերպությունների կողմից 2018 թվականին ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումների վերաբերյալ, հաշվարկվել են անհրաժեշտ ցուցանիշներ, կազմվել է ծրագրի իրականացման հիմնական արդյունքների վերաբերյալ սույն տարեկան զեկույցը:

ՀՀ-ում 2018 թվականին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում առաջընթացի վերաբերյալ զեկույցի պատրաստման համար ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից հավաքագրվել են անհրաժեշտ տվյալներ, կառուցվում են պահանջվող ցուցանիշները, որոնք կվերջնականացվեն և մինչև 2019 թվականի ապրիլի 1-ը առցանց կներբեռնվեն ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի կայքում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի 2018 թվականի միջոցառումների թիրախները և արդյունքները ներկայացված են հավելվածում:

Նախատեսվում է 2019թ. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ սկսել աշխատանքներ ՄԻԱՎ//ՁԻԱՀ-ի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծման ուղղությամբ:

Տարվա ընթացքում ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և ՄԻԱՎ վարակին զուգորդող հիվանդությունների համաճարակաբանական հետազոտություններ, դրանց զարգացման միտումների ուսումնասիրություն և վերլուծություն: Իրականացվել է նաև ՀՀ տարածքում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առանձնահատկությունների վերլուծություն: Կատարվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արձանագրված նոր դեպքերի համաճարա-

կաբանական վերլուծություն՝ ըստ սեռի, տարիքի, փոխանցման ուղու, բնակավայրի և այլն: Տարվա ընթացքում ընդհանրացվել, վերլուծվել են ՀՀ-ում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները: Կազմվել և առողջապահության նախարարություն են ներկայացվել հանրապետությունում ՄԻԱՎ-ի վերաբերյալ բնակչության հետազոտությունների արդյունքների մասին եռամսյակային, տարեկան հաշվետվությունները:

2018թ. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և ՏԳ-ների շրջանում: Ստացված տվյալներն օգտագործվել են ՀՀ-ում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի ազդեցության և արդյունքի ցուցանիշների հաշվարկման համար:

ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի առաջնային (փոխանցվող) դեղակայունության հայտնաբերման, ՀՀ-ում դեղակայունության մուտացիաների համաճարակաբանական հսկողության, երկրի տարածքում շրջանառվող ՄԻԱՎ-ի առավել տարածված ենթատիպերի որոշման նպատակով ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում իրականացվել է ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն: 2018 թվականի ընթացքում ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում իրականացվել են ՄԻԱՎ-ի գենոտիպավորման հետազոտություններ: Հաշվարկվել են ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները:

Ֆրանսիական 5% նախաձեռնության աջակցությամբ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից իրականացվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ քաղաքաբնակ աշխատանքային միգրանտների շրջանում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՌԴ կառավարության կողմից հաստատված աջակցության ծրագրի շրջանակում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն ՌԴ Ռոսպոտրեբնադզորի համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի հետ շարունակել է համատեղ իրականացնել հետևյալ 4 գիտահետազոտական աշխատանքները՝ «ՄԻԱՎ-ի դեղակայուն շտամների տարածման կանխում», «ՄԻԱՎ վարակի կապակցությամբ բժշկական օգնություն ստացող հիվանդների սոցիալ-ժողովրդագրական և կլինիկալաբորատոր բնութագիրը», «Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգի նվազեցում», «ՄԻԱՎ-ով ապրող կանանց վերարտադրողական առողջության վրա մարդու պապիլոմավիրուսի և սեռավարակների ազդեցության ուսումնասիրություն դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները կատարելագործելու նպատակով», որոնց արդյունքներն ամփոփվել են տարեվերջին:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն ներգրավված է եղել Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ Հարավային Կովկասի երկրներում միգրանտների շրջանում 2018թ. որակական և քանակական հետազոտությունների իրականացման աշխատանքներում:

2018 թվականին մշակվել, Գլոբալ հիմնադրամ է ներկայացվել և դրա կողմից հաստատվել 2019-2021թթ. համար դրամաշնորհային ծրագրային առաջարկը:

2018 թվականին ավարտվել են պատրաստվածության (կայունության) պլանի մշակման աշխատանքները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱԽԱՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ Ցուցանիշներ	Սկզբնական տվյալներ		Թիրախ	Արդյունք
		Ելակետային տվյալ	Տարեթիվ	2018	2018
I. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ					
1) Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակի փոխանցման նվազեցում առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում					
ա. ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում	0,5% (0,0-1,3) - Երևան	2016	<2% - Երևան	1,9%
	Վերջին ներարկման ընթացքում ներարկման մանրէազերծ պարագաներ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	98%	2016	>95%	96,6%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	55,6%	2016	60%	41,4%

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող ԹՆՕ-ների տոկոսը	54,2%	2016	56%	40,6%
ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների տոկոսը	38,1%	2016	45%	36,5%
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԹՆՕ-ների տոկոսը	12%	2016	35%	14,9%
ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	4219	2015	4320	4031
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԹՆՕ-ների տոկոսը (ծրագրային տվյալներ)	39,3%	2015	70%	61%

բ. ԹՆՕ-ներին փոխարինող բուժման տրամադրում	Փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ների թիվը	480	2015	500	568
գ. ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում	0,1% (0,0-0,1) - Երևան	2016	<2% - Երևան	0,6%
	Հաճախորդի հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԿՍԿ-ների տոկոսը	99,6%	2016	>95%	99,1%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող ԿՍԿ-ների տոկոսը	42,3%	2016	50%	40,6%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների տոկոսը	86,2%	2016	>60%	96,9%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԿՍԿ-ների տոկոսը	62,6%	2016	>50%	49,1%

	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների թիվը	3030	2015	3200	2986
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԿՍԿ-ների տոկոսը (ծրագրային տվյալներ)	39,3%	2015	70%	78%
դ. SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը SUS-ների շրջանում	0,8% (0,0-1,6) - Երևան	2016	<2% - Երևան	1,9%
	Անալ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած SUS-ների տոկոսը	80,4%	2016	85%	69,7%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող SUS-ների տոկոսը	74,8%	2016	75%	48,0%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների տոկոսը	39,7%	2016	45%	38,8%

	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած SUS-ների տոկոսը	32,5%	2016	60%	89,9%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների թիվը	2532	2015	5625	3697
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած SUS-ների տոկոսը (ծրագրային տվյալներ)	39,3%	2015	70%	51,5%
Ե. Աշխատանքային միգրանտների, նրանց ընտանիքի անդամների, պոտենցիալ միգրանտների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում՝ առողջապահական ծառայությունները աշխատանքային միգրանտների շրջանում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը աշխատանքային միգրանտների շրջանում	0,2% (0,1-0,8)	2016	<2% - Երևան	1,2%
	Մշտական գույքընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը աշխատանքային միգրանտների շրջանում	42,6%	2016	45%	44,6%

յությունների համապարփակ փաթեթի տրամադրմամբ	Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած աշխատանքային միգրանտների տոկոսը	76,2%	2016	75%	83,5%
	Կոմերցիոն զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած աշխատանքային միգրանտների տոկոսը	86,2%	2016	90%	72,1%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող աշխատանքային միգրանտների տոկոսը	34%	2016	35%	38,7%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած աշխատանքային միգրանտների տոկոսը	20,2%	2016	33%	2,9%

	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված աշխատանքային միգրանտների, նրանց ընտանիքի անդամների, պոտենցիալ միգրանտների թիվը	26808	2015	30000	20802
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած աշխատանքային միգրանտների, նրանց ընտանիքի անդամների, պոտենցիալ միգրանտների %-ը (ծրագրային տվյալներ)	53%	2015	>50%	51%
զ. Հյուրընկալող երկրների հետ համագործակցության զարգացում՝ միգրանտներին (օտարերկրյա պետությո-	ՄԻԱՎ վարակի կանխարգելման և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության հասանելիության մեծացում	-	2016	ՄԻԱՎ վարակի կանխարգելման և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և ՀՌՎ բուժման հասանելիության	ՄԻԱՎ վարակի կանխարգելման և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և ՀՌՎ բուժման

<p>յուններում գտնվող ՀՀ քաղաքացիներ) ՄԻԱՎ վարակի կանխարգելման հարցերով խորհր- դատվություն տրա- մադրելու և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անա- նուն հետազոտությ- յուն անցնելու, ան- հրաժեշտության դեպքում ՀՌՎ բուժ- ման հասանելիու- թյան և դրա անընդ- հատության ապա- հովման համար</p>				<p>ապահովում</p>	<p>հասանելիության ապահովում</p>
<p>Է. ՄԻԱՎ վարակի կանխարգելման մի- ջոցառումների իրա- կանացում՝ ՀՀ-ում բնակվող օտարերկ- րյա քաղաքացիների շրջանում</p>	<p>ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցա- ռումների թիվը</p>	<p>-</p>	<p>2016</p>	<p>1</p>	<p>1</p>

ը. ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում	1,2%	2015	<2%	0,19%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	61%	2016	65%	-
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հասանելիության մասին նշած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	82,3%	2016	86%	-
	Անհրաժեշտության դեպքում պահպանակ ձեռք բերելու հնարավորության մասին նշած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	70,9%	2016	>85%	-

Անհրաժեշտության դեպքում թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներ ձեռք բերելու հնարավորության մասին նշած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	75,1%	2016	85%	-
ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	27,1%	2016	45%	-
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը	43,4%	2015	50%	-
ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ՔԿՀ-	3210	2015	3400	2669

	ներում գտնվողների թիվը (ծրագրային տվյալներ)				
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԲԿՀ-ներում գտնվողների թիվը (ծրագրային տվյալներ)	401	2015	1700	2583
թ. Երիտասարդների շրջանում իրազեկման և ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների իրականացում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15-24 տարեկան երիտասարդների շրջանում	0,02%	2015	<0,1%	0,05%
	Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած երիտասարդների (15-24 տ) տոկոսը	81,9%	2016	85%	-

	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած երիտասարդների (15-24 տ) տոկոսը	76,9%	2016	80%	-
Ժա. Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար սեմինար-վարժանքների անցկացում	Սեմինար-վարժանքների անցածների թիվը	-	2016	50	33
Ժբ. Նախակոնտակտային կանխարգելման տրամադրում	Նախակոնտակտային կանխարգելում ստացած անձանց թիվը	-	2016	25	8
Ժգ. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցման նպատակով զանգ-	ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության նվազեցում	-	2016	Խարանի և խտրականության նվազեցում	Խարանի և խտրականության նվազեցում

վաճային լրատվամիջոցներով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի լուսաբանում, բնակչության իրազեկության մակարդակի բարձրացում					
2) Ռազմավարություն 2. ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում բժշկական կազմակերպություններում					
ա. ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան սկրինինգ	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների տոկոսը	100%	2015	100%	100%
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների թիվը	16194	2015	18000	16533
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան հետազոտություն կատարող լաբորատորիաների թիվը, որոնք անցել են որակի արտաքին հսկողություն	Բոլոր լաբորատորիաներ	2015	Բոլոր լաբորատորիաներ	Բոլոր լաբորատորիաներ

3) Ուազմավարություն 3. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծառայությունների ընդլայնում					
ա. Բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության հետագա ընդլայնում	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցածների թիվը (չհաշված հղիները)	57938	2015	80000	80494
բ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում, համաճարակաբանական հետազոտություն	ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցածների թիվը	4642	2015	5000	5864
գ. Ռեֆերենսային մեթոդով ՄԻԱՎ-ի հայտնաբերում, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն, ՄԻԱՎ վարակի	ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ռեֆերենսային մեթոդով հետազոտություն անցածների թիվ	325	2015	400	446

վերջնական ախտորոշում, համաճարակաբան ական հետազո- տություն					
Ե. ՄԻԱՎ-ի վերա- բերյալ հետազոտու- թյուն կատարող լա- բորատորիաներում որակի արտաքին և ներքին հսկողության իրականացում	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորա- տորիաների թիվը որտեղ ներդրված է որակի ներքին հսկո- ղության ընթացա- կարգ	-	2015	Բոլոր լաբորատորիաներ	Բոլոր լաբորատորիաներ
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորա- տորիաների թիվը, որոնք անցել են որակի արտաքին հսկողության	Բոլոր լաբորատորի աներ	2015	Բոլոր լաբորատորիաներ	Բոլոր լաբորատորիաներ

<p>գ. Բժշկական կազմակերպություններին ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության, ՄԻԱՎ վարակի ախտորոշման գործնական հարցերով մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության տրամադրում</p>	<p>Մեթոդական և գործնական օգնություն ստացած բժշկական կազմակերպությունների թիվը</p>	<p>136</p>	<p>2015</p>	<p>≥120</p>	<p>129</p>
<p>է. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, SUS-ների շրջանում ՀԿ-ների ուղղորդմամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրման ընդլայնում</p>	<p>ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի թվում ՀԿ-ների կողմից ուղղորդված դեպքերի մասնաբաժինը</p>	<p>3,1%</p>	<p>2015</p>	<p>15%</p>	<p>5,6%</p>

<p>ը. Բնակչության շրջանում, ներառյալ առավել վտանգի ենթարկվող խմբերը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության խթանման ու մասսայականացման նպատակով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններով ուղեկցվող հանրային միջոցառումների իրականացում</p>	<p>Իրականացված հանրային միջոցառումների թիվը</p>	<p>17</p>	<p>2015</p>	<p>20</p>	<p>20</p>
<p>թ. Մշակել արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ և սահմանված կարգով ներկայացնել հաստատման ՀՀ կառավարություն</p>	<p>Մշակված և հաստատված արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ</p>	<p>-</p>	<p>2016</p>	<p>Մշակված և հաստատված արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ</p>	<p>Մշակված և հաստատված արագ թեստավորման լիցենզավորման պահանջներ</p>

4) Ուազմավարություն 4. Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում					
ա. Բոլոր հղի կանանց ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության տրամադրում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը հղիների շրջանում	0,03%	2015	<0,1%	0,06%
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղի կանանց տոկոսը	98%	2015	>95%	>95%
բ. ՄԻԱՎ վարակ ունեցող հղիներին և նրանցից ծնված նորածիններին ՀՌՎ կանխարգելիչ բուժման տրամադրում	Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում ստացածների տոկոսը	100%	2015	100%	100%
	Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում ստացածների թիվը	29	2015	30	46
գ. Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող բժշկական կազմակերպություններին	Թեստ-հավաքածուների քանակ	-	2015	47000	56168
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաների թիվը,	12	2015	Բոլոր լաբորատորիաներ	Բոլոր լաբորատորիաներ

անհրաժեշտ քանակի թեստ-հավաքածուներով ապահովում	որոնք անցել են որակի արտաքին հսկողության				
դ. Ըստ անհրաժեշտության նորաձինների արհեստական կաթնախառնուրդներով ապահովում	Արհեստական կաթնախառնուրդներով ապահովված նորաձինների թիվ	-	2015	30	47
ե. Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ երկրորդ հետազոտության իրականացում	Թեստ-հավաքածուների քանակ	-	2015	47000	2600
II. ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ					
1) Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակով պացիենտներին ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում					
ա. ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողության իրականացում	Դիսպանսերային հսկողության մեջ ներառված պացիենտների թիվը	1569	2015	2250	2395
	Դիսպանսերային հսկողության մեջ գտնվողների թիվը	1241	2015	2150	2016

	Դիսպանսերային հսկողության շրջանակում լաբորատոր-գործիքային հետազոտություններ անցած ՄԻԱՎ վարակով պացիենտների թիվը	1241	2015	2150	2016
բ. ՄԻԱՎ վարակով պացիենտների զուգընկերների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության անցկացում	Հետազոտված մշտական զուգընկերների տոկոսը	>85%	2015	>85%	78%
գ. ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողության համակարգի բարելավում	ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացած նոր պացիենտներից դիսպանսերային հսկողության վերցվածների տեսակարար կշիռը	92,6%	2015	95%	93,5%

	Դիսպանսերային հսկողության երբևէ վերցվածներից տարվա ընթացքում դիսպանսերիզացիաանցածների տոկոսը	75,9%	2015	>75%	84,1%
դ. Հետկոնտակտային կանխարգելման տրամադրում ՄԻԱՎ-ով մասնագիտական և ոչ մասնագիտական վարակման վտանգի ենթարկվածներին, ներառյալ դիսկորդանտ զույգերին	Հետկոնտակտային կանխարգելում ստացածների	49	2015	80	28
ե. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման, ՄԻԱՎ	Վերանայված ուղեցույցներ	Վերանայված ուղեցույցներ	2016	Վերանայում՝ ըստ անհրաժեշտության	1

<p>վարակով պացի- ենտների բուժման և վարման, ՄԻԱՎ վա- րակի վերաբերյալ համաճարակաբա- նական հսկողության (հետազոտություն- ների) ուղեցույցների պարբերաբար վերանայում ԱՀԿ-ի ուղեցույցներին դրանք համահունչ դարձնելու նպատակով</p>					
<p>զ. ՀՌՎ բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակ ունեցող պա- ցիենտներին, բուժ- ման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգի իրականացում</p>	<p>ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների թիվը, որոնք ստանում են ՀՌՎ բուժում հաշվե- տու տարվա վերջի դրությամբ</p>	<p>941</p>	<p>2015</p>	<p>2000</p>	<p>1871</p>

Բուժման լաբորատոր մոնիտորինգ անցածների թիվը	941	2015	2000	1871
Առաջին շարքի սխեմաներով բուժում ստացողների թիվը	831	2015	1750	1690
Երկրորդ շարքի սխեմաներով բուժում ստացողների թիվը	110	2015	250	181
ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում ՀՌՎ բուժում ստացողների տոկոսը	26%	2015	55%	55%
ՄԻԱՎ վարակ ունեցող մեծահասակների և երեխաների տոկոսը, որոնք շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց	85,2%	2015	>85%	90,7%
ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով պացիենտների տո-	77,1%	2015	≥85%	85%

	կուր, որոնք ունեն վիրուսային ծանրա- բեռնվածության չհայտնաբերվող մակարդակ				
է. Բժշկական կազ- մակերպություննե- րին ՄԻԱՎ վա- րակով պացիենտ- ների վարման գործ- նական հարցերով մեթոդական և գործ- նական օգնության, տեխնիկական աջակցության տրա- մադրում	Մեթոդական և գործնական օգնու- թյուն ստացած բժշկական կազմա- կերպությունների թիվը	Բոլոր բժշկական կազմա- կերպու- թյունները	2015	Բոլոր բժշկական կազմակերպություն- ները	Բոլոր բժշկական կազմակերպություն- ները
ը. Օպորտունիս- տական վարակների ախտորոշման, բուժման և կանխարգելման տրամադրում	Օպորտունիստական վարակների բուժում ստացածների թիվը	239	2015	200	335
	Օպորտունիստական վարակների կան- խարգելում ստա- ցածների թիվը	138	2015	200	284

թ. ՄԻԱՎ վարակով պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրում	Խնամք և աջակցություն ստացողների թիվը	1209	2015	1800	2095
	ՄԻԱՎ վարակ ունեցող մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց	85,2%	2015	>85%	90,7%
ժ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժման տրամադրում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժում ստացածների թիվը	50	2015	50	63
ժա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով (ներառյալ ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ խարանն ու խտրականությունը) բուժաշխատողների շարունակական ուսուցում և կատարելագործում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով կատարելագործում անցած բուժաշխատողների թիվը	212	2015	200	-

III. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1) Ռազմավարություն 1. Համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) արդյունավետ համակարգի գործունեության ապահովում

<p>ա. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրով սահմանված միջոցառումների մոնիտորինգ և գնահատում</p>	<p>Իրականացված մոնիտորինգ և գնահատում</p>	<p>Մոնիտորինգ և գնահատում</p>	<p>2011</p>	<p>Մոնիտորինգ և գնահատում</p>	<p>Մոնիտորինգ և գնահատում</p>
	<p>Համաճարակաբանական հետազոտությունների և մոնիտորինգի տարեկան հաշվետվությունների ներկայացում</p>	<p>1</p>	<p>2016</p>	<p>1</p>	<p>1</p>
	<p>Իրականացված ֆինանսական մոնիտորինգ</p>	<p>ֆինանսական մոնիտորինգ</p>	<p>2015</p>	<p>ֆինանսական մոնիտորինգ</p>	<p>ֆինանսական մոնիտորինգ</p>
<p>բ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տվյալների համապարփակ էլեկտրոնային բազայի ստեղծում և վարում</p>	<p>Ստեղծված էլեկտրոնային բազա</p>	<p>-</p>	<p>2015</p>	<p>էլեկտրոնային բազայի ստեղծում</p>	<p>Սկսել են իրականացվել աշխատանքներ բազայի ստեղծման ուղղությամբ</p>
<p>գ. ՄԻԱՎ վարակի նկատմամբ ընթացիկ, կենսաբանական և վար-</p>	<p>ՄԻԱՎ վարակի նկատմամբ ընթացիկ համաճարակաբանական հսկողութ-</p>	<p>Ընթացիկ հսկողության իրականացում</p>	<p>2015</p>	<p>Ընթացիկ հսկողության իրականացում</p>	<p>Ընթացիկ հսկողության իրականացում</p>

քազձային համաճարակաբանական հսկողության (հետազոտությունների) իրականացում	յան (հետազոտությունների) իրականացում				
	ՄԻԱՎ վարակի արձանագրված նոր դեպքերի թիվը	294	2015	400	429
դ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների բուժման երկարատև մոնիտորինգի համակարգի գործունեության ապահովում դեղակայունության զարգացումը գնահատելու և կանխելու նպատակով	Դեղակայունության վաղ գնահատում	Դեղակայունության վաղ գնահատում	2015	Դեղակայունության կանխմանն ուղղված մոնիտորինգ	Դեղակայունության կանխմանն ուղղված մոնիտորինգ
ե. ՄԻԱՎ վարակին առնչվող գործնական հետազոտությունների իրականացում	Իրականացված հետազոտությունների թիվը	1	2015	2	6
զ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակ	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային	1	2015	1	1

կային ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների կազմում	ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացում				
է. Դրամաշնորհային ծրագրային առաջարկների մշակում և ներկայացում Գլոբալ հիմնադրամին և այլ դոնորներին/կազմակերպություններին	Մշակված և ներկայացված առաջարկների թիվը	1	2015	1	1
ը. Դրամաշնորհային ծրագրերից պետական ֆինանսավորման աստիճանական անցման պատրաստվածության (կայունության) պլանի մշակում	Մշակված պատրաստվածության (կայունության) պլան	-	2016	1	1